ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 4-Լ

«09» 01 2024 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կառուցվածքային փոփոխությունները և ելնելով Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2022 թվականի հունիսի 27-ի N 47 հրամանի (այսուհետ՝ Հրաման)՝

1) N 1 հավելվածի 2-րդ բաժնի 6-րդ գլխի 20-րդ կետում «Վարչության դատախազ 2» բառերը փոխարինել «Վարչության դատախազ 3» բառերով, իսկ վերջին տողի «**Ընդամենը 10**» բառերը փոխարինել «**Ընդամենը 11**» բառերով:

2) Ուժը կորցրած ճանաչել N 1 հավելվածի 2-րդ բաժնի 7-րդ և 10-րդ գլուխները:

3) N 1 հավելվածի 2-րդ բաժնի 9-րդ գլխի 31-րդ կետում «Վարչության ավագ դատախազ 4» բառերը փոխարինել «Վարչության ավագ դատախազ 3» բառերով, իսկ 32-րդ կետում «Վարչության դատախազ 5» բառերը փոխարինել «Վարչության դատախազ 6» բառերով:

4) N 1 հավելվածի 2-րդ բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.2-րդ գլխով.

ԳԼՈՒԽ 10.2. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ, ՊԵՏՈՒԹՅԱՆ և ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

36.5	Վարչության պետ	1
36.6	Վարչության պետի տեղակալ	3
36.7	Վարչության ավագ դատախազ	2
36.8	Վարչության դատախազ	7
	Ընդամենը	**13**

5) N 1 հավելվածի 2-րդ բաժնի 11-րդ գլխի 38-րդ կետում «վարչության պետի տեղակալ 1» բառերը փոխարինել «վարչության պետի տեղակալ 2» բառերով, իսկ վերջին տողի «**Ընդամենը 7**» բառերը փոխարինել «**Ընդամենը 8**» բառերով.

6) N 1 հավելվածի 2-րդ բաժնի 14-րդ գլխի 52-րդ կետում «վարչության դատախազ 7» բառերը փոխարինել «վարչության դատախազ 8» բառերով, իսկ վերջին տողի «**Ընդամենը 10**» բառերը փոխարինել «**Ընդամենը 11**» բառերով.

7) N 1 հավելվածի 2-րդ բաժնի 15-րդ գլխի 56-րդ կետում «Վարչության դատախազ 3» բառերը փոխարինել «Վարչության դատախազ 4» բառերով, իսկ վերջին տողի «**Ընդամենը 6**» բառերը փոխարինել «**Ընդամենը 7**» բառերով:

8) N 1 հավելվածի 2-րդ բաժնի 15-րդ գլխի վերջին տողում «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 127»*** բառերը փոխարինել «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 126»*** բառերով.

9) N 1 հավելվածի 4-րդ բաժնի 29-րդ գլխի 112-րդ կետում «դատախազության դատախազ 9» բառերը փոխարինել «դատախազության դատախազ 10» բառերով, իսկ վերջին տողի «**Ընդամենը 16**» բառերը փոխարինել «**Ընդամենը 17**» բառերով.

10) N 1 հավելվածի 4-րդ բաժնի 33-րդ գլխի վերջին տողում «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում 108»*** բառերը փոխարինել «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում 109»*** բառերով.

11) N 2 հավելվածի 1-ին բաժնի 17-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 17 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ԲԱԺԻՆ»:

11) N 2 հավելվածի 1-ին բաժնի 20-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 20 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ, ՊԵՏՈՒԹՅԱՆ և ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ԲԱԺԻՆ»:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազին, Երևան քաղաքի դատախազին, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, մարզերի, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա. Կ. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**